ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԸՀ/02-21

ք. Երևան «09» փետրվար 2021թ.

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Պետրոսյանի, որը գործում է ՀՀ ԿԸՀ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և մի կողմից, «Սմարթլայն» ՍՊԸ- ի դեմս տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 823400 (ութ հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով	«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան Գ Քոչարի 21ա	ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 01548908
գործառնական վարչություն	ՀՀ 1150009537660100
ՀՎՀՀ 01548306	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011177095	
Գլխավոր քարտուղար	
Գ.Պետրոսյան	Տ. Ղարիբյան
/ստորագրություն/	
Կ.Տ	

Հավելված N 1
« » փետրվարի 2021թ. կնքված
N ԿԸՀ/02-21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30192730/1	կազմ, լամինացիայի թաղանթ, A4 ձևաչափի	կազմ, լամինացիայի թաղանթ, A4 ձևաչափի, զսպանակով կարելու համար	հատ	8000.00	16000	2.00	Գ. Քոչարի 21ա	2.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
2	30192780/1	էջաբաժանիչ	Գունավոր ինքնակպչուն	հատ	250.00	7500	30.00		30.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
3	30193700/1	թղթադարակ, հարկերով, պլաստմասե	պլաստմասե 3 հարկերով թղթադարակ	հատ	3000.00	18000	6.00		6.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
4	22811150/1	նոթատետրեր	A5 ֆորմատի, տարվա օրերով, կաշվե կազմով	հատ	2000.00	30000	15.00		15.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
5	22811160/1	սղագրության տետրեր	A5 ֆորմատի, տողանի, նշումների համար	հատ	200.00	16000	80.00		80.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
6	22811200/1	հասցեների գրանցման գիրք	Գործավարական գիրք	հատ	3000.00	18000	6.00	Գ. Քոչարի 21ա	6.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.

7	22851100/1	արագակարներ	Թղթյա, սովորական	հատ	50.00	20000	400.00		400.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
8	30141200/1	հաշվասարք, գրասենյակային	12 նիշանի 18x13.5սմ չափերով, գործողությունները վահանակի վրա ցուցադրումով, ինքնալիցքավորվող	հատ	5000.00	40000	8.00		8.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
9	30192100/1	ռետին հասարակ	ռետին հասարակ	հատ	80.00	8000	100.00		100.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
10	30192121/1	գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր, կապույտ գույնի, մեխանիկական կառուցվածքով	հատ	100.00	40000	400.00		400.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
11	30192125/1	մարկերներ	Տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով	հատ	250.00	20000	80.00		80.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
12	30192128/1	գրիչ գելային	Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել)	հատ	500.00	40000	80.00		80.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
13	30192130/1	մատիտներ	Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ	հատ	70.00	14000	200.00		200.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
14	30192160/1	շտրիխներ	Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար, ջրային հիմքով (մինչև20 0C չսառչող) 20մլ տարողությամբ	հատ	200.00	20000	100.00		100.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
15	30192210/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	Գլանափաթեթված ժապավեն	հատ	250.00	15000	60.00	գ. Քոչարի 21ա	60.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.

16	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար	հատ	250.00	25000	100		100	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
17	30194500/1	տառերի գծագրման համար օգտագործվող քանոն	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով	հատ	100.00	2900	29.00		29.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
18	30197100/1	կարիչի մետաղալարե կապեր, մեծ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր	տուփ	100.00	30000	300.00		300.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
19	30197120/1	կոճգամներ	Մետաղյա, սովորական, գունավոր մեխիկով	տուփ	100.00	5000	50.00		50.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
20	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամ	հատ	10.00	30000	3000.00		3000.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
21	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար	հատ	70.00	21000	300.00		300.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
22	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար	հատ	1000.00	60000	60.00		60.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
23	30197235/1	թղթապանակ՝ ամրակով	Պլաստմասե կազմով, մետաղական սեղմակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	750.00	15000	20.00		20.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.

24	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1500.00	30000	20.00	Գ. Քոչարի 21ա	20.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
25	30199250/1	հատուկ Ա3 ծրար	Ծրարներ չթափանցող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի	հատ	70.00	40600	580		580	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
26	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի	հատ	170.00	20400	120.00		120.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
27	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով	Թուղթ նշումների համար, գունավոր, տարբեր չափերի, տրցակներով	հատ	1200.00	24000	20.00		20.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
28	30234300/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	դատարկ սկավառակ, առանց տուփի	հատ	150.00	45000	300.00		300.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
29	31442000/1	մարտկոց, AA տեսակի	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով	հատ	100.00	30000	300.00		300.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
30	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	Համապատասխան ձևաչափերի և տարբեր չափերի:	հատ	1000.00	20000	20.00		20.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
31	39263310/1	օրացույց, սեղանի	Սեղանի օրացույց նշումների համար տարբեր չափերի, պոկովի կամ թերթովի, պատվանդանով, գունավոր տպագրությամբ	հատ	1000.00	29000	29.00		29.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
32	39263320/1	օրացույց, պատի	Պատին ամրացվող մասով, գունավոր տպագրությամբ, գրքատիպ, յուրաքանչյուր ամիսն առանձին էջի վրա	հատ	2500.00	25000	10		10	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.

33	39263400/1	ամրակ, միջին	գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ:	տուփ	120.00	24000	200.00	Գ. Քոչարի 21ա	200.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
34	39263530/1	սեղմակ, մեծ	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար:	հատ	60.00	24000	400.00		400.00	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 25.12.2021թ.
ԸՆԴԱՄԵՆԸ				**823400**						

ԳՆՈՐԴ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀՀ. ք. Երևան Գ Քոչարի 21ա
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01548306
Հ/Հ 900011177095
Գլխավոր քարտուղար
Գ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
ՀՎՀՀ 01548908
ՀՀ 1150009537660100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տ.Ղարիբյան

Հավելված N 2
« » փետրվարի 2021թ. կնքված
N ԿԸՀ/02-21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192730/1	կազմ, լամինացիայի թաղանթ, A4 ձ—աչափի	4000	5333	6667	8000	9333	10667	12000	13333	14667	16000	16000
2	30192780/1	էջաբաժանիչ	1875	2500	3125	3750	4375	5000	5625	6250	6875	7500	7500
3	30193700/1	թղթադարակ, հարկերով, պլաստմասե	4500	6000	7500	9000	10500	12000	13500	15000	16500	18000	18000
4	22811150/1	նոթատետրեր	7500	10000	12500	15000	17500	20000	22500	25000	27500	30000	30000
5	22811160/1	սղագրության տետրեր	4000	5333	6667	8000	9333	10667	12000	13333	14667	16000	16000
6	22811200/1	հասցեների գրանցման գիրք	4500	6000	7500	9000	10500	12000	13500	15000	16500	18000	18000
7	22851100/1	արագակարներ	5000	6667	8333	10000	11667	13333	15000	16667	18333	20000	20000
8	30141200/1	հաշվասարք, գրասենյակային	10000	13333	16667	20000	23333	26667	30000	33333	36667	40000	40000
9	30192100/1	ռետին հասարակ	2000	2667	3333	4000	4667	5333	6000	6667	7333	8000	8000
10	30192121/1	գրիչ գնդիկավոր	10000	13333	16667	20000	23333	26667	30000	33333	36667	40000	40000
11	30192125/1	մարկերներ	5000	6667	8333	10000	11667	13333	15000	16667	18333	20000	20000
12	30192128/1	գրիչ գելային	10000	13333	16667	20000	23333	26667	30000	33333	36667	40000	40000
13	30192130/1	մատիտներ	3500	4667	5833	7000	8167	9333	10500	11667	12833	14000	14000
14	30192160/1	շտրիխներ	5000	6667	8333	10000	11667	13333	15000	16667	18333	20000	20000
15	30192210/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	3750	5000	6250	7500	8750	10000	11250	12500	13750	15000	15000
16	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	6250	8333	10417	12500	14583	16667	18750	20833	22917	25000	25000
17	30194500/1	տառերի գծագրման համար օգտագործվող քանոն	725	967	1208	1450	1692	1933	2175	2417	2658	2900	2900
18	30197100/1	կարիչի մետաղալարե կապեր, մեծ	7500	10000	12500	15000	17500	20000	22500	25000	27500	30000	30000
19	30197120/1	կոճզամներ	1250	1667	2083	2500	2917	3333	3750	4167	4583	5000	5000
20	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ,	7500	10000	12500	15000	17500	20000	22500	25000	27500	30000	30000

		ֆայլ											
21	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	5250	7000	8750	10500	12250	14000	15750	17500	19250	21000	21000
22	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով	15000	20000	25000	30000	35000	40000	45000	50000	55000	60000	60000
23	30197235/1	թղթապանակ՝ ամրակով	3750	5000	6250	7500	8750	10000	11250	12500	13750	15000	15000
24	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար	7500	10000	12500	15000	17500	20000	22500	25000	27500	30000	30000
25	30199250/1	հատուկ Ա3 ծրար	10150	13533	16917	20300	23683	27067	30450	33833	37217	40600	40600
26	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	5100	6800	8500	10200	11900	13600	15300	17000	18700	20400	20400
27	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով	6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
28	30234300/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	11250	15000	18750	22500	26250	30000	33750	37500	41250	45000	45000
29	31442000/1	մարտկոց, AA տեսակի	7500	10000	12500	15000	17500	20000	22500	25000	27500	30000	30000
30	39263200/1	գրասենյակային զիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	5000	6667	8333	10000	11667	13333	15000	16667	18333	20000	20000
31	39263310/1	օրացույց, սեղանի	7250	9667	12083	14500	16917	19333	21750	24167	26583	29000	29000
32	39263320/1	օրացույց, պատի	6250	8333	10417	12500	14583	16667	18750	20833	22917	25000	25000
33	39263400/1	ամրակ, միջին	6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
34	39263530/1	սեղմակ, մեծ	6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
ԸՆԴԱՄԵՆԸ													823400

ԳՆՈՐԴ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀՀ. ք. Երևան Գ Քոչարի 21ա
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01548306
Հ/Հ 900011177095
Գլխավոր քարտուղար
Գ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
ՀՎՀՀ 01548908
ՀՀ 1150009537660100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Ն.Ղարիբյան